Արձանագրություն N 4
ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 հունվարի 2022թ
ժամը 15:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նիստը նախագահող՝ Հովհաննես Օհանյանը
անդամ՝ Սպարտակ Մաթևոսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր՝ հանձնաժողովի նախագահ Մարատ Սևոյանը

օրակարգ 1. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով որակավորման և պայմանագրի ապահովումներ չներկայացնելու հարցի քննարկում
2. Գնման ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 8-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-25-րդ, 27-րդ, 29-30-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին

I. Էլեկտրոնային աճուրդի 2-րդ, 4-րդ, 8-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-25-րդ, 27-րդ, 29-30-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին

(Հովհաննես Օհանյան)

1. Գնահատող հանձնաժողովի նիստը նախագահողը ներկայացրեց, որ ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 8-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-25-րդ, 27-րդ, 29-30-րդ չափաբաժինների համար ընտրված մասնակից է ճանաչվել «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն, որին (eauction.armeps.am) համակարգի միջոցով 2022 թվականի հունվարի 4-ին ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ընկերությունը 2022թ հունվարի 17-ին համակարգ է ներբեռնել ստորագրված պայմանագիրը, սակայն ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով հրավերի 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում և 9.4 կետով սահմանված կարգով Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով և հրավերի 9.3 կետով սահմանված պահանջները, Ընկերությունը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունել վերոգրյալը, հրավերով սահմանված պահանջների համաձայն, որոշեց. ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 8-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-25-րդ, 27-րդ, 29-30-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով հրավերի 1-ին մասի 8.21-րդ կետով սահմանված պահանջի համաձայն՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող _____ Հովհաննես Օհանյան

անդամ՝ _____ Սպարտակ Մաթևոսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան